



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2017թ.

N 15 -Ա

ք.Ստեփանակերտ

ԹԻՎ 6 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՍՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը և հաշվի առնելով թիվ 6 ընտրատարածքից ընտրված Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Իվան Ավանեսյանի պատգամավորական լիազորությունները 2017 թվականի հոկտեմբերի 6-ից դադարած համարելու մասին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությունը, Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. 2017 թվականի դեկտեմբերի 11-ին թիվ 6 ընտրատարածքում նշանակել Արցախի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի լրացուցիչ ընտրություններ:

2. Հաստատել՝

1) լրացուցիչ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) լրացուցիչ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ծախսերի նախահաշիվը՝ 8 919 300 (ութ միլիոն ինը հարյուր տասնինը հազար երեք հարյուր) ՀՀ դրամի չափով՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հանձնարարել՝

1) Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներին և աշխատակազմին, Արցախի Հանրապետության Հաղորդի տարածքային ընտրական հանձնաժողովին՝ ապահովել ժամանակացույցով նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը և ընտրությունները պատշաճ մակարդակով կազմակերպելու աշխատանքները.

2) Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Ս.Մելքումյանին՝

ա. կազմակերպել սույն որոշումը սեղմ ժամկետում համապատասխան շահագրգիռ գերատեսչություններին և պատասխանատու կատարողներին ուղարկելու աշխատանքները.

բ. կազմակերպել սույն որոշումը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը՝ ընտրությունները պետական բյուջեի պահուստային ֆոնդից ֆինանսավորելու նպատակով.

3) Արցախի Հանրապետության Հաղրութի տարածքային և համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին՝ ընտրություններից հետո, օրենսդրությամբ սահմանված ժամկետներում վերադաս ընտրական հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ:

4. Սույն որոշման կատարման ընդհանուր վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Ս. Արզումանյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԹԻՎ 6 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Ընտրությունների անցկացման օրը` 11 դեկտեմբերի, 2017թվականի

N	Միջոցառման բովանդակությունը	Իրավական հիմքը (ԼՂՀ ընտրական օրենսգիրք)	Կատարման ժամկետը (ներառյալ)՝ 2017-2018թթ.	Կատարող(ներ)ը
1	Դիտորդների հավատարմագրում իրականացվում կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարվում է. ընտրությունը նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան տասն օր առաջ	Հոդված 30, մաս 2	Հոկտեմբերի 13-ից մինչև դեկտեմբերի 1-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ)
2	Տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) անդամների, վստահված անձանց և դիտորդների համար ուսումնական ձեռնարկներ հրատարակվում են. ընտրությունների անցկացման ժամանակահատվածում	Հոդված 48, մաս 1, կետ 15	Հոկտեմբեր-նոյեմբեր	ԿԸՀ
3	Թեկնածուի՝ վերջին հինգ տարում Արցախի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին հինգ տարում Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին տեղեկանքը տրամադրվում է դիմելուց հետո. եռօրյա ժամկետում, բայց ոչ շուտ, քան մինչև ընտրությունների նշանակումը	Հոդված 113, մաս 3	Հոկտեմբերի 13-ից սկսած	Ոստիկանություն
4	Ընտրական շտաբները կարող են կազմավորվել. ընտրություն նշանակվելուց հետո	Հոդված 18, մաս 5	Հոկտեմբերի 13-ից	Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
5	Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների գրանցման փաստաթղթերը Հաղորդի տարածքային ընտրական հանձնաժողով (ՏարԸՀ) ներկայացվում են. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55 և ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	Հոդված 125, մաս 5	Հոկտեմբերի 18-ից մինչև հոկտեմբերի 27-ի ժամը 18.00-ն	Թեկնածու կամ թեկնածուի լիազոր ներկայացուցիչ

6	Համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին որոշում ընդունվում է. ընտրությունները նշանակվելուց հետո՝ 21-օրյա ժամկետում	Հոդված 20, մաս 3	Մինչև նոյեմբերի 2-ը	Համայնքի ղեկավար
7	Ընտրական տեղամասերը կազմավորվում են. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ	Հոդված 14, մաս 1	Մինչև հոկտեմբերի 27-ը	Ոստիկանություն՝ համայնքի ղեկավարի, ՏարԸՀ անդամի մասնակցությամբ
8	Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների գրանցումը կատարվում է. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45 և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	Հոդված 125, մաս 6	Հոկտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 6-ի ժամը 18.00-ն	Հաղորդի ՏարԸՀ
9	Նախընտրական քարոզչությունը ֆինանսավորելու նպատակով նախընտրական հիմնադրամներ բացվում են. գրանցվելուց հետո	Հոդված 25, մաս 1, Հոդված 120, մաս 1	Նոյեմբերի 7-ից	Թեկնածուներ
10	Թեկնածուի լիազոր ներկայացուցչին կազմավորված ընտրական տեղամասերի թվի եռապատիկից ոչ ավելի թվով վստահված անձանց վկայականներ տրվում է. թեկնածուներին գրանցելուց հետո՝ հնգօրյա ժամկետում	Հոդված 32, մաս 2	Նոյեմբերի 7-ից սկսած	Հաղորդի ՏարԸՀ
11	Տեղամասային կենտրոնները սահմանվում են. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ	Հոդված 16, մաս 1	Մինչև հոկտեմբերի 29-ը	Համայնքի ղեկավար
12	Տեղամասային կենտրոնի սահմանման մասին ոստիկանությունը, ՏարԸՀ-ը և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող տեղեկացվում են. կենտրոնը սահմանելուց անմիջապես հետո՝ անհապաղ	Հոդված 16, մաս 1	Հոկտեմբերի 29-ից ոչ ուշ	Համայնքի ղեկավար
13	Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և այդ տվյալները ԿԸՀ ներկայացվում են. երկօրյա ժամկետում	Հոդված 49, մաս 1, կետ 2	Մինչև հոկտեմբերի 31-ը	Հաղորդի ՏարԸՀ
14	Ընտրողների ցուցակների մեկ օրինակը (վերջին էջում ներառվող ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, դրանց քննարկման կարգի, ժամանակի և պայմանների մասին տեղեկանքով) տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում և տեղամասային կենտրոնում փակցվում է. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ	Հոդված 10, մաս 1, Հոդված 11, մաս 3, Հոդված 6, մաս 8	Մինչև նոյեմբերի 1-ը	Ոստիկանություն, Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող
15	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է . թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ	Հոդված 18, մաս 1	Նոյեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 9-ի ժամը 24.00-ն	Նախընտրական քարոզչություն իրականացնողներ

16	Օրենսդրությամբ սահմանված դրույթների խախտմամբ փակցված քարոզչական պաստառները վերացվում են. անհասպաղ	Հոդված 20, մաս 8	Նոյեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 9-ի ժամը 24.00-ն ընկած ժամանակահատվածում փակցվածները՝ հայտնաբերման պահից	Համայնքի ղեկավար, անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության աջակցությամբ
17	Գույքի և եկամուտների մասին հայտարարագիրը Հաղորդի ՏարԸՀ ներկայացվում է. թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հինգ օրվա ընթացքում	Հոդված 6, մաս 5	Նոյեմբերի 7-ից մինչև նոյեմբերի 12-ը	Թեկնածուներ
18	Թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերի պատճենները ընտրական հանձնաժողովների անդամներին, վստահված անձանց, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, դիտորդներին տրամադրվում են. գրավոր դիմումի հիման վրա՝ եռօրյա ժամկետում	Հոդված 6, մաս 6	Սկսած նոյեմբերի 6-ից	Հաղորդի ՏարԸՀ
19	Նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ Հաղորդի ՏարԸՀ տեղեկանք ներկայացվում է. թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրը մեկ	Հոդված 25, մաս 6	Նոյեմբերի 7-ից սկսած՝ 3 աշխատանքային օրը մեկ	Բանկեր, որտեղ բացված են հատուկ հաշվեհամարներ
20	ՏԸՀ-ներ կազմավորելու համար հայտերը հանձնաժողովի նախագահին են ներկայացվում. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	Հոդված 42, մաս 2	Նոյեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 16-ի ժամը 18.00-ն	Հաղորդի ՏարԸՀ-ի անդամներ
21	ՏԸՀ-ի առաջին նիստը կայանում է. հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում	Հոդված 42, մաս 5	Նոյեմբերի 13-ից մինչև նոյեմբերի 18-ը	Հաղորդի ՏարԸՀ-ի նախագահ, ՏԸՀ-ի տարիքով ավագ անդամ
22	Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը՝ ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերով, Հաղորդի ՏարԸՀ-ին ներկայացվում են . նախընտրական քարոզչությունն սկսելուց հետո՝ տասներորդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սահմանված ժամկետից ոչ ուշ, քան երեք օր առաջ	Հոդված 27, մաս 1	Նոյեմբերի 17-ին և դեկտեմբերի 15-ին	Թեկնածուներ
23	Իրենց թեկնածությունը հանելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան տասն օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	Հոդված 119, մաս 3,4	Մինչև դեկտեմբերի 1-ի ժամը 18.00-ն	Թեկնածուներ

24	Ընտրողների թվի վերաբերյալ (ըստ ընտրատարածքի և ընտրական տեղամասերի) Հաղորդի ՏարԸՀ-ին տեղեկանք տրամադրվում է. քվեարկության օրվանից տասն օր և երեք օր առաջ	Հոդված 10, մաս 2	Դեկտեմբերի 1-ին և դեկտեմբերի 8-ին	Ոստիկանություն
25	Քվեարկության օրվանից տասն օր առաջ ընտրողների թվի վերաբերյալ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա քվեաթերթիկները տպագրվում են. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան տասը, և ոչ ուշ, քան երեք օր առաջ	Հոդված 56, մաս 6	Դեկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 8-ը	ԿԸՀ
26	Թեկնածուների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակումն արգելվում է. քվեարկության օրվան նախորդող յոթ օրվա ընթացքում, ներառյալ քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն	Հոդված 21, մաս 3	Դեկտեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 11-ի ժամը 20.00-ն	Սոցիալական հարաբերությունների կազմակերպություններ, պատվիրատուներ
27	Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ոստիկանություն ներկայացվում է. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան հինգ օր առաջ	Հոդված 12, մաս 1	Մինչև դեկտեմբերի 6-ը	Յուրաքանչյուր ոք
28	ՏԸՀ-ների կնիքները Հաղորդի ՏարԸՀ-ին հանձնվում են. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան հինգ և ոչ ուշ, քան երեք օր առաջ	Հոդված 57, մաս 3	Դեկտեմբերի 6-ից մինչև դեկտեմբերի 8-ը	ԿԸՀ
29	Ընտրական օրենսգրքով սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում անհրաժեշտ փոփոխություններ կամ ուղղումներ կատարվում են և այդ մասին դիմողը գրավոր տեղեկացվում է. դիմումն ստանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան չորս օր առաջ	Հոդված 12, մաս 1	Մինչև դեկտեմբերի 7-ը	Ոստիկանություն
30	Իրեն ընտրողների ցուցակում ընդգրկելու մասին դիմում ոստիկանություն ներկայացվում է. քվեարկության օրվան նախորդող չորս օրվա ընթացքում՝ մինչև քվեարկության ավարտը	Հոդված 12, մաս 2	Դեկտեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 11-ի ժամը 20.00-ն	Յուրաքանչյուր ոք
31	Քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, քվեարկության տեղի և ժամանակի մասին ընտրողներին ծանուցագրեր են ուղարկվում . քվեարկության օրվանից ոչ ուշ, քան երեք օր առաջ	Հոդված 11, մաս 6	Մինչև դեկտեմբերի 8-ը	Ոստիկանություն

32	<p>Ոստիկանության կողմից կազմվող ընտրողների ցուցակներն (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակները)՝ ըստ ընտրական տեղամասերի և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված երկու օրինակից (ընտրողների ցուցակների, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը ՏՀՀ-ների նախագահներին տրամադրվում են.</p> <p>քվեարկության օրվանից երկու օր առաջ</p>	Հոդված 10, մաս 3	Դեկտեմբերի 9-ին	Ոստիկանություն
33	<p>Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է.</p> <p>քվեարկության օրվանից երկու օր առաջ</p>	Հոդված 11, մաս 4	Դեկտեմբերի 9-ին	ՏՀՀ-ի նախագահ
34	<p>ՏՀՀ-ներին քվեաթերթիկները և կնիքների փաթեթները հանձնվում են.</p> <p>քվեարկության նախորդ օրը</p>	Հոդված 56, մաս 7, Հոդված 57, մաս 4	Դեկտեմբերի 10-ին	Հաղորդի ՏարՀՀ
35	<p>Քվեարկության սենյակի կահավորումը պետք է ավարտվի.</p> <p>քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն</p>	Հոդված 54, մաս 3	Դեկտեմբերի 10-ին՝ մինչև ժամը 24.00-ն	Համայնքի ղեկավար , Հաղորդի ՏարՀՀ
36	<p>ՏՀՀ-ին հանձնված բոլոր քվեաթերթիկները ստորագրվում են.</p> <p>քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն</p>	Հոդված 58, մաս 7	Դեկտեմբերի 10-ին՝ մինչև ժամը 24.00-ն	Վիճակահանությամբ որոշված ՏՀՀ-ի 3 անդամներ
37	<p>Քվեարկության օրը ՏՀՀ-ի նիստը սկսվում է.</p> <p>քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին</p>	Հոդված 61, մաս 1	Դեկտեմբերի 11-ին՝ ժամը 7.00-ին	ՏՀՀ
38	<p>Քվեարկության սկիզբը հայտարարվում և ընտրողների մուտքը քվեարկության սենյակ թույլատրվում է.</p> <p>քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին</p>	Հոդված 62, մաս 1	Դեկտեմբերի 11-ին՝ ժամը 8.00-ին	ՏՀՀ-ի նախագահ
39	<p>Քվեարկության ավարտի մասին հայտարարվում և ընտրողների մուտքը քվեարկության սենյակ արգելվում է.</p> <p>քվեարկության օրը՝ ժամը 20.00-ին</p>	Հոդված 66, մաս 1	Դեկտեմբերի 11-ին՝ ժամը 20.00-ին	ՏՀՀ-ի նախագահ
40	<p>Քվեարկության օրը մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը Հաղորդի ՏարՀՀ հաղորդվում են.</p> <p>քվեարկության օրը, համապատասխանաբար մինչև ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը</p>	Հոդված 6, մաս 9	Դեկտեմբերի 11-ին	ՏՀՀ-ներ

41	Քվեարկության օրը մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին նախորդ կետում նշված տվյալները ամփոփվում, հրապարակվում և հաղորդում են ԿԸՀ. նախորդ կետում նշված պարբերականությամբ	Հոդված 6, մաս 9	Դեկտեմբերի 11-ին	Հաղրութի ՏարԸՀ
42	Ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին ոստիկանության տեղեկանքի հիման վրա ընտրողների ցուցակում լրացում կատարվում է. քվեարկության օրը` լրացուցիչ ցուցակ կազմելու միջոցով	Հոդված 12, մաս 2	Դեկտեմբերի 11-ին` մինչև ժամը 20.00-ն	ՏԸՀ
43	Արգելվում է հրապարակել ընտրողների հարցման արդյունքներն այն մասին, թե ում օգտին են քվեարկել. քվեարկության օրը` մինչև ժամը 20.00-ն	Հոդված 21, մաս 3	Դեկտեմբերի 11-ին` մինչև ժամը 20.00-ն	Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերություններ, հեռուստաընկերություններ
44	Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառույթները դադարեցվում են. քվեարկության օրվանից	Հոդված 26, մաս 5	Դեկտեմբերի 11-ից	Թեկնածուներ, բանկեր
45	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմումն ավարտվում և արձանագրությունը հրապարակվում է. նիստի վերջում, բայց ոչ ուշ, քան քվեարկության ավարտից տասը ժամ հետո	Հոդված 69, մաս 5	Մինչև դեկտեմբերի 12-ի ժամը 6.00-ն	ՏԸՀ-ի նախագահ
46	Ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթը, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը և հանձնաժողովի կնիքը Հաղրութի ՏարԸՀ ներկայացվում են. քվեարկության ավարտից հետո` ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում	Հոդված 69, մաս 9	Մինչև դեկտեմբերի 12-ի ժամը 8.00-ն	ՏԸՀ-ի նախագահ և քարտուղար
47	Տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները` ըստ ընտրական տեղամասերի աղյուսակավորվում են. պարբերաբար, բայց ոչ ուշ, քան երեք ժամը մեկ	Հոդված 71, մաս 2	Մինչև դեկտեմբերի 12-ի ժամը 14.00-ն	Հաղրութի ՏարԸՀ
48	Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների աղյուսակավորումն ավարտվում է. քվեարկության ավարտից հետո` ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում	Հոդված 71, մաս 2	Մինչև դեկտեմբերի 12-ի ժամը 14.00-ն	Հաղրութի ՏարԸՀ
49	Տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման օրինակը` վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով, փակցվում է հանձնաժողովում` բոլորի համար տեսանելի տեղում. անհասպաղ	Հոդված 71, մաս 3	Մինչև դեկտեմբերի 12-ի ժամը 14.00-ն	Հաղրութի ՏարԸՀ-ի նախագահ

50	Մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում և արձանագրությամբ վավերացվում են. քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում	Հոդված 72, մաս 1	Մինչև դեկտեմբերի 12-ի ժամը 14.00-ն	Հաղորդի ՏարԸՀ
51	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում կարող է ներկայացվել միայն Հաղորդի ՏարԸՀ. քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն	Հոդված 47, մաս 1	Մինչև դեկտեմբերի 12-ի ժամը 18.00-ն	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը ներկա գտնված թեկնածու, վստահված անձ, հատուկ կարծիք հայտնած ՏԸՀ անդամ
52	ՏԸՀ-ների կնիքները ԿԸՀ ներկայացվում են. քվեարկության ավարտից հետո, ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթի հետ միաժամանակ	Հոդված 57, մաս 5	Մինչև դեկտեմբերի 12-ի ժամը 20.00-ն	Հաղորդի ՏարԸՀ
53	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը ԿԸՀ ներկայացվում է. քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում	Հոդված 71, մաս 3	Մինչև դեկտեմբերի 12-ի ժամը 20.00-ն	Հաղորդի ՏարԸՀ
54	Տարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է. քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, իսկ բողոք լինելու դեպքում՝ քվեարկության օրվանից հետո՝ հինգերորդ օրը	Հոդված 72, մաս 2	Մինչև դեկտեմբերի 13-ի ժամը 20.00-ն	Հաղորդի ՏարԸՀ
55	Վերահաշվարկն իրականացվում է. վերահաշվարկի դիմումների ընդունման ժամկետի հաջորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո՝ հինգերորդ օրը՝ ժամը 14.00-ն	Հոդված 47, մաս 6	Դեկտեմբերի 13-ի ժամը 9.00-ից սկսած մինչև դեկտեմբերի 16-ի ժամը 14.00-ն	Հաղորդի ՏարԸՀ
56	Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը տեղամասային կենտրոնում մնում են փակցված. մինչև ՏԸՀ-ի լիազորությունների դադարման օրը	Հոդված 11, մաս 4	Մինչև դեկտեմբերի 16-ը	ՏԸՀ
57	Տարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների քվեարկության արդյունքներն ամփոփվում և դրա վերաբերյալ որոշում ընդունվում է. քվեարկության օրվանից հետո՝ հինգ օրվա ընթացքում	Հոդված 72, մաս 8, Հոդված 124, մաս 1	Մինչև դեկտեմբերի 16-ը	Հաղորդի ՏարԸՀ

58	Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրության և որոշման օրինակները ԿԸՀ ներկայացվում են. <i>էրկօրյա ժամկետում</i>	Հոդված 72, մաս 9, Հոդված 124, մաս 9	Մինչև դեկտեմբերի 18-ը	Հաղորդի ՏարԸՀ
59	Ընտրական գրավի գումարը վերադարձվում է. <i>գրավոր դիմումի հիման վրա՝ մեկամսյա ժամկետում</i>	Հոդված 24, մաս 2	Դեկտեմբերի 18-ից հետո դիմելու դեպքում	ԿԸՀ
60	ՏԸՀ-ը ՏարԸՀ-ին, իսկ ՏարԸՀ-ը ԿԸՀ-ին ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է. <i>ընտրություններից հետո՝ համապատասխանաբար տասնօրյա ժամկետում և քսանօրյա ժամկետում</i>	Հոդված 23, մաս 4	Մինչև դեկտեմբերի 21-ը և դեկտեմբերի 31-ը	ՏԸՀ, Հաղորդի ՏարԸՀ
61	Կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը Արցախի Հանրապետության վերահսկիչ պալատ ներկայացվում է. <i>Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում</i>	Հոդված 23, մաս 4	Մինչև հունվարի 10-ը	ԿԸՀ
62	Ընտրությունից հետո նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե. <i>ընտրության արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալուց հետո</i>	Հոդված 26, մաս 7	Մարտի 16-ից հետո	ԿԸՀ

Ծանոթություն-Ընտրական հանձնաժողովների աշխատաժամերն են՝ 9.00-ից մինչև 18.00, հանգստյան օրերը՝ շաբաթ և կիրակի, եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքով և սույն ժամանակացույցով այլ բան նախատեսված չէ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս.ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Հավելված N2

Արցախի Հանրապետության

կենտրոնական ընտրական հանձնաժողովի

2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 15 -Ա որոշման

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

ԹԻՎ 6 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ

Ընտրությունների անցկացման օրը՝ 11 դեկտեմբերի, 2017 թվականի

Տնտ. դաս. հոդվածը	ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	Գումարը (ՀՀ դրամ)
Ընտրություններ		
4115	Աշխատավարձ (փոխհատուցում), այդ թվում՝	6968,500
	Հաղորդի տարածքային ընտրական հանձնաժողովի (ՏարԸՀ) նախագահի տեղակալ և հանձնաժողովի քարտուղար՝ 82 500 դրամ x 2 մարդ x 2 ամիս	330,000
	ՏարԸՀ անդամներ՝ 55 000 դրամ x 5 մարդ x 2 ամիս	550,000
	Տեղամասային ընտրական հանձնաժողովի (ՏԸՀ) նախագահ՝ 44 000 դրամ x 31 տեղամաս	1364,000
	ՏԸՀ նախագահի տեղակալ և ՏԸՀ քարտուղար՝ 27 500 դրամ x 2 մարդ x 31 տեղամաս	1705,000
	ՏԸՀ անդամներ՝ 16 500 դրամ x 5 մարդ x 31 տեղամաս	2557,500
	ՏԸՀ նախագահ՝ 55 000 դրամ x 2 տեղամաս	110,000
	ՏԸՀ նախագահի տեղակալ և ՏԸՀ քարտուղար՝ 33 000 դրամ x 2 մարդ x 2 տեղամաս	132,000
	ՏԸՀ անդամներ՝ 22 000 դրամ x 5 մարդ x 2 տեղամաս	220,000
4214	Կապի ծառայության վճար ՏարԸՀ՝ 1 x 30,000 դրամ, ՏԸՀ՝ 33 տեղամաս x 1,000 դրամ	63,000
4234	Տեղեկատվական ծառայություններ, այդ թվում՝	934,800
	Արձանագրությունների ձևերի տպագրություն՝ 33 տեղամաս x 50 հատ x 20 դրամ	33,000
	Քվեաթերթիկների տպագրություն՝ 8 850 հատ x 18 դրամ	159,300
	Գործավարության մատյան՝ 33 տեղամաս x 1,500 դրամ	49,500
	Վկայականների տպագրություն՝ 33 տեղամաս x 40 հատ x 150 դրամ	198,000
	Քարոզչական աշխատանքներ՝ պաստառ՝ 165 ք/մ	495,000
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ՝ 33 տեղամաս x 1,000 դրամ	33,000
4264	Տրանսպորտային նյութեր, այդ թվում՝ բենզին 2300 լ x 400 դրամ	920,000
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	8919,300

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս.ՄԵԼՔՈՒՄՅԱՆ